

թուղիկէ հաւատքը տարածելու: Տարակոյս չկայ
 որ իւր այս գործունէութեան արդիւնքները իր
 զգուշաւոր կենսագրին մեղի աւանդածներէն շատ
 աւելի եղած պիտի ըլլան, եւ պիտի գտնուին
 այս մասին տեղեկութիւններ Ս. Ժողովոյ գիւա-
 նին, ինչպէս նաեւ Մխիթարեան Միաբանու-
 թեան վենետկոյ վանքը՝ իր Միաբաններէն հա-
 ղորդուած, որոնք սակայն առայժմ անմատչելի
 են: Ես ունիմ միայն Սարգսին 1773ին Հռոմ
 Ս. Ժողովոյ քարտուղարին գրած նամակին օրի-
 նակը (Գիւ. Լիվ.), որուն մէջ ինքն Սարգիս
 կ'ըսէ. «... հրաման առեալ ի քահանայապետէն
 եւ ի Սրբոյ Ժողովոյն քնացաք ի Կ. Պօլիս: Եւ թէ
 անդանօր զինչ, եւ զորպիսի՞ հալածանս կրեցաք,
 եւ զորքան օժանդակութիւնս արադաք ուղղա-
 փառացն Հայոց, եւ որպիսի քարոզութեամբ
 վարեցաք յայտնապէս ի հոյակապ եկեղեցիս
 Հայոց, եւ զայլ այսպիսի իրակութիւնս տեսա-
 նելոց է Աստուծով Սրբազան Ժողովն քեւ հան-
 դերձ, ի ձեռն ճշմարիտ վկայական գրեանց գե-
 րազանց դեսպանացն ֆրանսայու եւ Նապօլոյոյ,
 որք ականջալուրք եւ ականատեսք գոլով ամե-
 նայն որպիսութեանց աւից եւ կրից մերոց՝ վկայ-
 եալ հաւաստապէս գրեն...»: Եւ իրօք իւր
 քարոզութեան արդիւնքն են՝ վաստկուած
 կաթուղիկեայ Եկեղեցւոյ, բաց ի նշանաւոր
 եւ հասարակ աշխարհականներէն, նաեւ Սա-
 մուէլ Եպիսկոպոսն Պրուսայու, Գրիգոր Պաս-
 մաճեան Պատրիարքն Կ. Պօլսոյ, եւ Յարու-
 թիւն Բասենցի, Արքեպիսկոպոսն Էջմիածնի,